

**Վարդիկ եզան հեքիաթը / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),
Լոռու բարբառ (խոսվածք)**

Ըլել ա, չի ըլել մի մարդ, ունեցել ա մի կնիկ, մի աղջիկ: Եղ կնիկը մեռել ա, մի եղնակին ա ուզել: Եղնակինը հետը մի աղջիկ ա բերել, մարդի աղջկա թայը: Եղ մարդը ունեցել ա մի եզը, անումը՝ Վարդիկ:

Եղ եղնակինը իրեն մարդի աղջկանը ասում ա.— Եզը տար արածացրու:— Մի հացի կուտ ա տալի, թե:— Կի՛, իսմե՛, իրիկունը սաղ եղ բի:

Մի շուն էլ ա հետը դրած ըլում, ասում ա.— Շանն է՛ լ կշտացրու:

Աղջիկը եզը տանում ա արածացնելու:

Արածացնում ա, հետն էլ լաց ըլում: Եզը մարդու պես լեզու ա ըլում ու խոսում ա աղջկա հետ, ասում ա.— Ախչի՛, ինչի՞ ես լաց ըլում:

Աղջիկն ասում ա.— Իմ մերացուն մի հացի կուտ ա տվել, թե՛ կի՛, իսմե՛, շանը կշտացրու, բիգունը կուտը սաղ տուն բի, բա որ լաց չիլեմ, ի՞նչ անեմ: Մի կրոյի թեշիկ էլ ձեռս ա տվե, թե՛ եղ էլ թել մանե:

Եզն ասում ա.— Ախչի՛, դու միտքը մի՛ անի, աստված օղորմած ա, իմ մի պոզը եղ ա, մինը մեղը ա, ուստիս օրը եղը ծծե, պաս օրը մեղը ծծե:

Վարդիկ եզը ինչ որ ասում ա, աղջիկն էն էլ անում ա, ըտով էլ ապրում ա:

Օրերի մի օրը եզը արածացընելիս աղջիկը քարի վրա նստած ա ըլում, թեշիկը մանելիս ա ըլում: Մանելիս տեղը քարըմը մի ծակ ա ըլում, մատնախիլիկի կունդը դրվեր ա ընկնում:

Աղջիկը կրանում ա, թմաշ անում, որ մատնախիլիկի կունդը հանի, տենում ա մի պառավ, ասում ա.— Դեղի ջա՛ն, մատնախիլիկի կունդը ընդի վեր ընկավ, ինձ տուր:— Ասում ա պառավը:— Որ ըտենց լավ ախչիկ ես, տո՛ ն արի:

Ախչիկը գնում ա տուն:

Պառավն ասում ա.— Որ էղ դայդին լավ ախչիկ ես, գնա մեր ճիսամանիցը թթու հանե, բի՛, կի՛: Ախչիկը գնում ա տենում ճիսամանի մեջը օձ ու կարիձ ա:

— Վա յ,— ասում ա,— դեղի ջա՛ն, ի՞նչ լավն ա, կասենաս իմ մոր դրած թթուն ըլի:

Ասում ա պառավը:— Որ ըթե լավ ախչիկ ես, գնա մեր տաշտիցը հաց բի՛, կի՛:

Գնում ա տենում ախչիկը տաշտի մեջը տավարի թրիք ա դարսած:

— Վո՛ յ,— ասում ա,— դեղի ջա՛ն, էս ի՞նչ լավ հաց ունես թխած, կասենաս իմ մոր թխած հացը ըլի: Փոտն էնքան անուշ ա, որ փոտիցը կշտացա:

Ասում ա պառավը:— Որ դու ըթե լավ ախչիկ ես, արի գլուխը կոփե:

Ախչիկը նստում ա, պառավը գլուխը գոզն ա դնում, տենում ա՝ որթունաքով լիքն ա, ասում ա:— Դեղի ջա՛ն, էս ինչ թամուզ գլուխ ունես, մազերդ թամուզ, կասենաս իմ մոր գլուխն ըլի:

Պառավը գլուխը գոզիցը վեր ա ունում, ասում ա.— Ախչիկ ջա՛ն, որ ըթե լավ ախչիկ ես, մեր թավլումը իրեք ջուր ա զալի՝ մինը սև ա, մինը՝ սպիտակ, մինը նարընջի ա: Կերթաս մեր թավլեն, սևը որ զա, գլուխտ նի չես տալ, սպիտակն էլ որ զա, էլ չես նի տալ գլուխտ, որ նարընջին զա՝ գլուխտ շըլընքիցդ հեղ նի տու, որ էրեսդ էլ թրջվի, ու կդառնաս ոսկեմազիկ, ոսկերեսիկ:

Ինչ որ պառավն ասում ա՝ ախչիկը անում ա. գլուխը նի ա կրիսում նարնջի ջրի տակը, դառնում ա ոսկեմազիկ, ոսկերեսիկ: Գալիս ա մըտնախիլիկի կունդը առնում, բիգունը եզը քշում ա, գնում տունը, գլուխը աղլուխով փթաթում ա, որ տենին ոչ ոսկե մազերը. համա էրեսն էրեսում ա:

Եղնամերը տենում ա, ասում ա.— Վա՛յ քու զլիխն, դու եղ ընկի, իմ ախչիկը պըսի էքուց տանի եզր արածացնի:

Էն քշերը եղնամերը իրան ախչկա հմա գաթա ա թխում ու նազուկ, ձու ա եփում ու ռավոտը հետր դնում ա, որ եզր տանի արածացնի: Իրան ախչիկն էլ ա մըտնահիլիկը վեր անում, որ մլու անի: Դա որ եզր հանդն ա տանում, Վարդիկ եզր զալիս ա շորերիցը ֆուտ անում, որ տենի, թե էլի էն ախչիկն ա, պողը տա՝ ծծի: Ախչիկը խփում ա, դենը քշում: Գնում ա էն քարի վրա նստում, մըտնահիլիկը մանում: Մըտնահիլիկի կունդը դվեր ա ընկնում: Կոանում ա, որ տենի, թե ի՞նչ էլավ մըտնահիլիկի կունդը տենում ա ընդի մի պառավ. ձեն տվուց.— Ա՛յ քավթառ, մըտնահիլիկիս կունդը դուս բի՛:

Ասավ.— Որ ըթե լավ ախչիկ ես, տո՛ւն արի:

Ախչիկը գնաց տուն:

Պառավն ասավ.— Ճխամանիցը թթու հանի, կի՛:

Գնաց տեհավ օձ ու կարիճ.— Վա՛յ զլիխող.— ասավ,— Ճխամանումը օ՛ձ ու կարիճ ա լքրել, ինձ ասում ա հանի՛, կի՛:

Ասավ.— Գնա՛, տաշտիցը հաց հանի, կի՛:

Գնաց տեհավ տավարի թրիքը դարսած, ասավ.— Վա՛յ զլիխող, տվարի թրիք ա դարսած:

Ասավ.— Արի՛, զլուխս քթվե:

Ախչիկը նստեց, պրավը զլուխը դրուց գողը. տեհավ որթունքով լիքն ա.— Կորի՛,— ասավ,— անիծած քաֆթա՛ն, որթունքը զլուխը լիքն ա:

Ասավ.— Որ ըթե լավ ախչիկ ես, գնա մեր թավլեն՝ ընդի իրեք ջուր ա զալի, նարնջին որ զա՝ զլուխդ նի չտաս, սպիտակն էլ որ զա՝ էլ չի նի տաս, սեր որ զա՝ էրեսիցդ հետ նի տու, ոսկեմազիկ կդառնաս:

Գնաց ախչիկը, պառավի ասած էրկու ջուրն էկավ անցկացավ, զլուխը նի չտվուց, սեր որ էկավ՝ նի տվուց, ախչկա զլուխն ու էրեսը դառավ իշի պոչ:

Մըտնահիլիկի կունդը վիկալավ ախչիկն ու դուս էկավ: Միկունը եզն աղաք արավ, գնաց իրենց տունը:

Ասավ.— Նանի ջա՛ն, ոսկեմազիկ եմ:

Մերը տեհավ ախչկանը, ասավ.— Վա՛յ, իշի պոչ ա կպել ձըկատիցդ:

Ասա վ.— Ախչի՛, ի նշ տեհար էսօր:

Ասավ.— Նանի՛, Վարդիկ եզր ինձանե ֆուտ կալավ:

Էդ պառավն իմացավ, որ եղ ախչկա հունարը Վարդիկ եզնումն ա, ինչ անում ա՝ եզն ա անում, ու սուտ հիվանդացավ: Մարդն էկավ հարցրուց.— Ի՞նչ ես ուզում, այ կնիկ, ասա, ինչ ուզես՝ կձարեմ, կըերեմ:

Ասավ.— Վարդիկ եզան սուկին ու պլոճիկն եմ ուզում:

Ասավ մարդը.— Քու ցավը տանի, թաք դու սըղանաս:

Էտ օրը Վարդիկ եզր էն առաջի կնկա ախչիկը տարել էր հանդը:

Ասավ Վարդիկ եզր ախչկանը.— Քու մերացուն հիվանդացել ա, իմ սակին ու պլոճիկն ա ուզում, էքուց ինձ մորթիլ պտին, իմ միսը նրանք կուտեն, քի միս չեն տալ, իմ օսկոռնին չիմ կհավաքես, մի դարտակ գոմում կտանես, կփուս. մի վախտ քի հըմա պէտքը կգամ:

Մթնեց. ախչիկը տարավ տուն եզանը:

Ռավոտը եզր մորթեցին, սուկին ու պլոճիկը խրովեցին, տվին կնկանը, միսը իրենք կերան, ախչկան զատ չովլին:

Ախչիկը օսկոռնին հվաքեր, ասեին.— Մեր տունն ա, թող հվաքի:

Ախչիկը օսկոռնին չիմ հվաքեց, մի օսկոռ էլ ա դեն չզձեց: Տարավ մի խարաբա գոմում կիտեց:

Էղ օրերումը տանեցիք խաչը գնացին: Խաչը գնալիս տեղը մերացուն էրկու խան աղանձ արավ, տանը շաղ տվուց, մի բաղիա էլ բերուց ընդի վեր դրուց, էն առաջի կնզա ախչկանը ասավ.— Մենք խաչն ենք գնում, որու պըտի էս աղանձը կենդ-կենդ ձեռով հվաքես, լրցընես տաշտը, ֆող չըլի միջին, էղ բաղիան էլ աղի արտասունքով պըտիս լրցընի: Թե անես ոչ, կզամ կիւեղդեմ քի:

Ասավ ու գնաց խաչ:

Ախչկը լա՞ց ա ըլում, լա՞ց ա ըլում, արտասունքը կաթացընում ա բաղիանի մեջ ու հավաքում ա աղանձը, լրցնում տաշտը:

Մի ֆոքեսեր պառավ գալիս ա էտ ախչկա կուշտը, ասում ա:— Ա՛խչիկ ջա՞ն, խի՞ էս տուն մտել՝ լաց ըլում: Թքավորի տղի հմա որուշը քցում են, որ ախչիկ ուզեն, որուն էլ արի թամաշա արա:

— Վա՞յ, — ասում ա, — նանի ջա՞ն, բա իմ հալը տենում չե՞ս, ի՞նչ ա:

Ասում ա պառավը: — Ի՞նչ ա, բալա ջա՞ն, քու հալը:

— Իմ մերացուն էրկու խան աղանձը շաղ ա տվել, որ ձեռով կենտ-կենտ հվաքեմ, ածեմ տաշտը, բաղիան էլ լրցնեմ աղի արտասունքով, թե որ զա տենա էղ արած չեմ, ինձ խեղտիլ պտի:

Պառավը ավիլը վեր ա ունում, ավելոտում ա էն աղանձը ու ածում ա տաշտը, բաղիեն ջրով լրցնում ա, իրեք բուռ աղ ածում մեջը:— Է՛տ էլ քու արտասունքը, — ասում ա:— Դե վերել, դուս ըլինք, գնանք թամաշա անենք:

Ղուշը մի տեղ էլ ա վեր գալիս չի ըլում, գալիս ա էտ ախչկա զլիսին վեր գալի:

Ասում են:— Էս ջնդար ախչկը ո՞րդիան էկավ:

Տանում են դրան մի գոմ գձում, դրուշը գոմի ծակովը նի ա մտնում, գնում նրա զլիսին վեր գալի: Թքավորի տղեն ասում ա:— Իմ դսմաթը էտ ա:

Ու նրան նշան ա տալի, մտիկ անում, թե որդի ա գնում տուն մտնում: Դրանե ետք ախչիկը գնում ա Վարդիկ եզան օսկոռնուն դավորն ըլելու:

Գնում ա, տենում ա մի ռախտած ձի, մի ձեռք կնիկարմատի շոր վրեն, հաց ու պաշար էլ վրեն: Իրան հազի հին շորերը հանում ա, ձիու վրի շորերը հազնում ա, դառնում ա մի հուրի-մալաք: Զիուն վեր ա ըլում, ըլու ա ըլում դրա խաչը: Զին գնում ա, ոնց որ աստղը ծոր տալիս ըլի: Խալխը թմաշ ա անում: զարմանում են, ասում են:— Երկնքիցն ա վեր էկել, հրիշտա կ ա:

Գնում ա, խաչումը վեր գալի: Շատերը համեցեք են անում, գնում չի, իրան հացն ու պաշարը հանում ա ու ջոկ ուտում, եղ իրան ձիու վրա նստում ու գալի գեղը:

Իշի պոչը ու իրան մերն էլ են տենում նրան: Նա որ զեղն ա գալի, ձին տանում ա տեղը կապում, շորերը հանում ա ետ վրեն գձում, իրան հին շորերը հազնում ա, գալիս ա տուն ու ըսկըսում ա լաց ըլիլը: Եղնամերն ու իրան ախչիկ Իշի պոչը խանչից եղ են դառնում, գալի տուն:

Իշի պոչը ասում ա ախչկան:— Վա՞յ զլիսիդ, դու ըստի լաց ես ըլում, մենք ընդի մի հուրի-մալաք տեհանք, որ ձին աստղերի հետ խաղեր:

Ասում ա ախչիկը: — Դու մեր ունեիր՝ քի տարավ, ես մեր չունեի, ես ի՞նչ անեմ:

Ըստուր էքփ օրը թքավորի տղեն հըրսանիքը նստացընում ա. լա՞վ-լա՞վ շորեր են բերում ոսկեմազիկ, ոսկերեսիկ աղջկան հազընում, որ տանեն պսակեն: Դետք ա քշերը պսակեն: Եղնա մերը Ոսկեմազիկի շորերը հանում ա իրան ախչկան հազընում, նրան դնում ա թոնրի միջին, ախչկան կաղնեցնում ա թախտի վրա: Էղ վախտը սարք են անում, որ տանին պսակեն, կատուն կլավում ա.

Մոնիառ՝ Իշխ պոչը թախտին ա՝,
Ուկեմազիկը թռնիրն ա՝.

Կատվի գլխին տալիս ա եղնամերը, ասում ա. — Վա՛յ գլխիդ: Էլ ա կլավում.

Մոնիառ՝ Իշխ պոչը թախտին ա՝,
Ուկեմազիկը թռնիրն ա՝.

Թքավորի տղեն իմանում ա եղ մոնիառուն, ասում ա. — Սո՛ւս կացեք, տենանք կատուն ի՞նչ ա
ասում:

Խալխն անսաս են անում: Մին էլ ա կատուն կլավում.

Մոնիառ՝ Իշխ պոչը թախտին ա՝,
Ուկեմազիկը թռնիրն ա՝.

Մարդ ա դրկում թքավորի տղեն. գնում են հանում Ուկեմազիկին թռնրիցը, տենում են՝ Իշխ
պոչը թախտին ա: Իշխ պոչի հազից շորերը հանում են. հըրսանիքը թռղում են, նրանց հմա
դիվան անում: Իշխ պոչին ու իրան մորը ամենուն կապում են դարձրի պոչից, վեր են թռղում
Հոռմելա¹ դզի վրա, ջարդ ու փուրդ են ըլում, շան պէս սրտակում:

Ուկեմազիկ ախչիկը թքավորի տղի կուշտը օքմին ա դրգում, թե — Կացի մի սհաթ, ես գնամ
իմ շորերը հազնեմ, իմ ձին բերեմ, որ իմ ձիու վրեն նի ըլեմ:

Գնում ա. Վարդիկ եզան օսկոռնին էր նրա ձին: Գնաց շորերը հաքավ ու ձին բերեց, ինքը վեր
էլավ իրան ձիուն: Էդ վախտը թքավորի տղեն տեհավ, որ իրան նշանի օրվա Հուրի-մալաքն ա,
նոր հասկացավ ու հրանիք արավ:

Օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արին, կերան, խմեցին: Նրանք հասան իրանց մուրազին,
դուք էլ հասնիք ձեր մուրազին:

Չարը ընդի, բարին ըստի:

Աստըծանե իրեք խնձոր վեր էկավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին:

1 Դաշտ, որը գտնվում է Օձուն գյուղի մոտ,—Ծ. Բ.: